

117. ԻՆՉ ԳԻԿԱ՝ ԶՈՆԻՐԸՎԻՑ ԳԻԿԱ

Մարդ մե յըմնօր կը տեսնա՝ ուր կնիկ օր կերակուլ կէփե, յա՛ աղի, յա՛ ալնի կէփե, կը կովի հետ, գելնա կէրթա մըտ ղոնքաջ: Զոնքաջ վփեսեն օր կը տեսնա՝ կուրիւնա, մըշ մտքին կըսե— վո՛լա, փեսեն ընծի բան-ման է բերի, հմա օր գիմնա՛ մարդ էկեր է դանդըտի աղի ու ալնի կերակուլի վրեն, կը հեռոտի, կըսե.

— Բո՛ւ պակ շուն, ես լե գինամ ընծի բան-մա՛ն իս բերի. խափանիս դու ու քու կնիկ. էնի շը դի՛նա, շատին՝ շատ, քչին՝ քիչ:

Մարդ յետ գիկա, դընցնա կալի մե մոտով, կը տեսնա՝ հանդե մեծ ախալեր ու պղտիկ ախալեր, ցորնի շեղջի յառեջ՝ կը դաբշտին, շըն կոնա լեզու գտնա. մեծ կըսե. «Ես շատվոր իմ, ընծի շաս՝ պտի հասնի». պղտիկ կըսե. «Շատ էլ շատվոր՝ հափսար ինք դատի-բանի, հափսար պտի բաժնինք»:

Մարդ մեջ գընկնա, կըսե.

— Շատին՝ շատ, քչին՝ քիչ:

— Դու էր պակաս իմ դիխուն,— կը ճվա պղտիկ ախալեր,— պտի ըսեր՝ «Աստված բարաքաթ տա», յընցներ էրթեր քու բաւնին:

Մարդ գընցնա կէրթա, կը մտնա դաշտ, ոաստ գիկա հովվու մե. կիշկե օշխըրին, կըսե.

— Աստված բարաքաթ տա:

Հովիվ, դու հովիվ, կը քաշե գդոպալ: գընկնա ըդոր քան, քու ըսածին կը ծեծե, մարդ կը լալուճիի, կըսե.

— Յորի՛ն ընծի ծեծիր, իմ մեղքն ի՛նչ է:

— Դու պտի ըսեր չէ՛ թե՛ «Աստված բարաքաթ տա», պտի ըսեր՝ «Աստված ըղոց քոք կտրե»: Գլխուց դու բան ըսիր, դու պլով խրատեցի:

Մարդ հովվուն կը թորկե կէրթա ուր ճամողեն, կը տեսնա՝ դպա ուրին մեռել մե կը բերին, կը մոտենա մեռելատերերուն, բանձը ձենով կըսե:

— Աստված ըղոց քոք կտրե:

Մեռելատերեր դմեռել կը մոռնան, կը թափին մարդու վրեն, աղել մե կիտան, յետե կը դառնան կըսին:

— Պտի ըսեր՝ «Աստված հողին լուսավորե»:

Մեծ ու ջարդից՝ ըղրա ջանդակ կը մոմոա, իմալ ձավար մըջ սանդին, հմա ի՛նչ, ախ ու ուրի էնելով՝ կէրթա ուր ճամողեն, կէրթա, կէրթա, կը հասնի դեղիմ՝ յեղր, կը տեսնա քանիմ՝ մարդ սատկուկ շուն մի ջանդակ քաշեքաշ կը բերին:

— Աստված հողին լուսավորե:

Օր կըսե, շան քաշողներն դջանդակ կը թողին, կը թափին վլըր մարդուն, գլխուն, բերեսին, մեջքին է՛ն խոբր կը դարկին, քիչ մնա ուշքն էրթա:

— Իդա քրդի շնծեծ, պտի ըսեր՝ «Թ՛յո՛ւ, ինչ հոտուկ է»:

Ըղոց ձեռքեն կաղատվի, կէրթա ուր ճամուցեն, ճամպին ոաստ դիկա հարսնածներուն. դհու կը դմբա, դուռնի ձեն աշխարհ բոնի, մարդիկ ծափ կիտան, կը սլարին, քեֆ կէնին, ըղի հմա կը մոտենա թաղա հարսին՝ յերեսնուվի կըսե:

— Թ՛յո՛ւ, ինչ հոտուկ է:

Հարսնածներ կը լսին, դհու-դուռնեն կը դադրի, մարդիկ կը թողին ծափն ու սլար՝ դընկնան վըր ըղոր, էս կը թալե ընդրա ձեռք, էս կը թալե ընդրա ձեռք, քու ըսածին ջարդ կիտան, կը հսլին խմորի սլես, կը դառնան կըսին:

— Մարդ օր հարսնիք մտնա՝ պտի պարե, չէ՛ թե ախմախ-ախմախ խոսա:

Ըղոց ձեռքեն լե կաղատի, կէրթա քառեջ, կը հասնի տեղ մե, կը տեսնա՝ նեճըրվան թվընքով նշան է բոնի հավքու մե, հա՛ հա՛ պտի դարկե, հավքն օր կը տեսնա պարողն, արախչին բանձը բոնած՝ կը թոնա, նեճիրվան կը կատդի, ուրին կը թալե վըր մարդուն, թվընքի կոթով էն խոբր կը դարկե, քիչ մնա հոգին տա:

— Տո՛, ջրո՛տ բերան,— կըսե,— նեճիր օր տեսար՝ արախչիդ ի ձեռն՝ պտի կուղեկուղ էրթեր, չէ՛ թե վեր-վեր թոնելով:

Մարդն ըզբրնն լե կաղատվի, կուզեկուզ կերթա ուր ճամպեն,  
էգու մն մոտով գընցնա, էգու տեր ղէգի պողու տեղ կը դնե, կը բռնե  
սանիմ՝ վարոց կը քաշե մեջքին, լանդե մե կիտա պաւեկին, լասլըս-  
տրրկու պես կը փախցու:

Խուլասա՝ մարդն հմալ ծեծուկ ու ջառդոտուկ՝ դիկա հասնի  
տուն. կնիկ, օր կը տեսնա ըզոր արնոտ ու ուռած մոռլթ, դիմնա  
զբանի էութեն, օր ուր աղին ու ալնին է էրի, մեկ կը ծիծղա, մեկ  
դիլա, մարդն ուր սրտի մաղձ կը թափե, կըսե.

— Ինչ դիկա՝ զո՛նքըջից դիկա:

